

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)

2020 թ.

Գլխավոր խմբագիր՝  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)

Ղախիչ՝ 77771

Տպագրական 8 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.12.2019

Հանձնված է տպագրության

15.05.2020

---

С О Ю З Ю Р И С Т О В Р А  
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)  
2020 г.

Главный редактор:  
академик НАН РА,  
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Редакционный совет

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Николай Стойко - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 24.12.2019  
Подписано к печати 15.05.2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Օլիմպիա Պեղանյան

ԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՐՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ..... 4

### Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ԷԿՈԼՈՅՈՒՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ..... 13

### Նորայր Բալայան

ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՈՒՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... 33

### Հովսեփ Բեդկյան

ՎԿԱՅԻ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼՈՒՑ ԱՁԱՏՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 39

### Թաթուլ Մանասերյան

ԳՆԱՃԻ ԶՍՊՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 46

### Արթուր Վարդանյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ . 52

### Տիգրան Ղազարյան

ԴԱՏԱԽԱՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ..... 60

### Առնոլդ Վարդանյան

ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՁԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ..... 71

### Դավիթ Զիլֆինյան

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑՆ ԱՁԱՏԱՋՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 78

### Գրիգոր Չոբանյան

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆԻՇԵԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 89

### Արմեն Զաքարյան

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՏԵՂԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿՈՒՆՔՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՈՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 96

### Սերգեյ Միրզոյան

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԻԿՐՈԼՈԳԻԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 111

### Արտակ Հովհաննիսյան

ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ..... 119

## ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԷՎՈՅՈՒՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### Վարդան Պողոսյան

*«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) փոխարինող անդամ, 2013-2015 թթ. սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ*

### Նորա Սարգսյան

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու*

Հիմնական իրավունքները՝ որպես պոզիտիվ ամրագրված սահմանադրական իրավունքներ, Հայաստանում երկար պատմություն չունեն և առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվել են միայն Խորհրդային Հայաստանում: Այդուհանդերձ, խորհրդային պետությունում, որտեղ առանձին անհատը ստորադասված էր «հանրության շահերին», հիմնական իրավունքները, որքան էլ որ դրանք հռչակված լինեին սահմանադրությունում, չէին կարող ունենալ և չունեին այն նշանակությունը, որը բնորոշ է ժամանակակից իրավական պետություններին (I): Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից ընկալմամբ հիմնական իրավունքների և դրանց իրական դերի մասին կարելի է խոսել միայն անկախության ձեռքբերումից հետո (II), սակայն հիմնական իրավունքների կարգավորման նկատմամբ խորհրդային մոտեցումները և ազդեցությունը ամբողջությամբ հաղթահարելու համար պահանջվեցին երկու ծավալուն սահմանադրական փոփոխություններ (III և IV): Հիմնական իրավունքների լիարժեք կենսագործումը և դրանց գործնական նշանակության բարձրացումը, այդուհանդերձ, մեծապես կապված են հիմնական իրավունքների հասցեատիրոջ՝ հանրային իշխանության մարմինների (առաջին հերթին՝ դատարանների և վարչական մարմինների) հիմնական իրավունքների ազդեցության պատշաճ ընկալումից (V):

### I. Հիմնական իրավունքների բնորոշ գծերը խորհրդային սահմանադրություններում

Խորհրդային Միությունում սահմանադրությունը դիտարկվում էր որպես առավելապես քաղաքական-գաղափարախոսական փաստաթուղթ, իսկ դրա նորմերը համարվում էին ծրագրային դրույթներ կամ ընդհանուր ուղենիշներ: Կոմունիստական գաղափարախոսության վրա հիմնված ԽՍՀՄ 1924 թ., 1936 թ. և 1977 թ. բոլոր սահմանադրությունները, ինչպես նաև դրանց բովանդակությունը գրեթե անփոփոխ վերարտադրող ԽՍՀՄ հանրապետությունների սահմանադրություններն<sup>1</sup> առաջնային էին համարում քաղաքական-գաղափարախոսական սկզբունքները՝ հետին պլան մղելով մարդուն, նրա հիմնական իրավունքները և անմիջական գործողությամբ:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 1922 թ. փետրվարի 2-ի Սահմանադրություն (մեծապես հիմնված էր ՌՍՖՍՀ 1918 թ. Սահմանադրության վրա), Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 1937 թ. մարտի 23-ի Սահմանադրություն (Հիմնական օրենք), Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության 1978 թ. ապրիլի 14-ի Սահմանադրություն:

յունը: Դրանով նսեմացվում էր նաև Սահմանադրության նորմատիվ բնույթը: Խորհրդային իրավունքի գիտության մեջ գերիշխում էր այն մոտեցումը, որ Սահմանադրության նորմերը «կոնկրետ իրավական» հարաբերություններ չեն առաջացնում, այլ միայն ընդհանուր կարգավորիչի դեր ունեն, և, հետևաբար, իրավունքների և ազատությունների հետ կապված կոնկրետ վեճի շրջանակներում հնարավոր չէ անմիջականորեն հենվել սահմանադրական նորմերի վրա<sup>1</sup>:

Հիմնական իրավունքների ընկալումը՝ որպես մարդ-պետություն հարաբերությունների առանցք, խորհրդային համակարգում արմատապես տարբերվում էր լիբերալ իրավական պետություններից: Խորհրդային պետության և գաղափարայնությունը բնորոշ էր «հասարակական» շահերի գերակայությունը քաղաքացու իրավունքների և ազատությունների նկատմամբ, իսկ հասարակական շահերի միակ ճշմարիտ մեկնողը կոմունիստական կուսակցությունն էր: Պետության տեսությունը մարդուն չէր դիտում որպես ինքնավար արժեք, քանի որ մարդու և հասարակության միջև հարաբերություններում առաջնայինը հասարակությունն էր: Հետևաբար, անհատի իրավունքների պաշտպանությունը դիտվում էր որպես երկրորդային՝ հասարակական շահերի պահպանության համեմատությամբ:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 1922 թ. փետրվարի 2-ի Սահմանադրությունը<sup>2</sup> չուներ հիմնական իրավունքներին նվիրված հատուկ գլուխ. սահմանադրական իրավունքները և ազատությունները, բացառությամբ ընտրական իրավունքի, սահմանված էին Սահմանադրության 1-ին գլխում, որը վերնագրված էր «Շահագործվող և աշխատավոր ժողովրդի իշխանության հիմնական սկզբունքները»: Սահմանադրության 6-րդ հոդվածը «աշխատավորների քաղաքացիական դաստիարակության, մտավոր, բարոյական ազատագրության և դասակարգային կազմակերպության նպատակով» ՀՍԽՀ աշխատավորներին տրամադրում էր հետևյալ ազատությունները՝

- խոսքի ազատություն և մամուլի անկախություն (հոդված 6, «բ» ենթակետ),
- ժողովների, միտինգների, ցույցերի և այլ համախմբումների ազատություն (հոդված 6, «գ» ենթակետ),
- միությունների ազատություն (հոդված 6, «դ» ենթակետ),
- ազատորեն կրոնական և հակակրոնական պրոպագանդ վարելու իրավունք (հոդված 6, «ա» ենթակետ):

Ուշագրավ է, որ բացառությամբ 6-րդ հոդվածի «ա» ենթակետում ամրագրված իրավունքի, որը վերապահված էր բոլոր քաղաքացիներին, 6-րդ հոդվածի «բ»-«դ» ենթակետերում ամրագրված ազատությունները վերապահված էին միայն ՀՍԽՀ աշխատավորներին: Սահմանադրության 5-րդ հոդվածի «բ» ենթակետով «շահագործող դասակարգերը զրկվում են ընդհանրապես քաղաքական իրավունքներից և հատկապես քաղաքական պաշտոնակալության իրավունքից»: Ինչ վերաբերում էր աշխատավորներին, ապա նրանք, ըստ Սահմանադրության 2-րդ հոդվածի, վայելում էին հավասար իրավունքներ՝ «առանց ազգի և դավանանքի խտրության»: Սահմանադրության այս դրույթները, ինչպես նաև 1-ին և 5-րդ հոդվածի «ա» ենթակետերը, հստակորեն արտացոլում էին ՀՍԽՀ իշխանության դասակարգային բնույթը՝ որպես բանվորների և գյուղացիների պետություն:

Ի տարբերություն իր նախորդի՝ ՀՍՍՀ 1937 թ. Սահմանադրությունը<sup>3</sup> առանձին գլուխ էր նվիրում հիմնական իրավունքներին՝ դրանք կարգավորելով հիմնական պարտականությունների հետ միասին: Սահմանադրության 8-րդ գլուխը, որը վերնագրված էր «Քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականություն-

<sup>1</sup> Stéu A. Венгеров, Прямое действие Конституции: правовые, социальные, психологические аспекты // Общественные науки и современность, 1995, № 5, էջ 53:

<sup>2</sup> Stéu ՀՍԽՀ Դեկրետների և որոշումների հավաքածու, 25 ապրիլի, 1922 թ., հ. 8, էջ 57-72:

<sup>3</sup> Հրապարակված է 1937 թ. մարտի 26-ի «Խորհրդային Հայաստան» թերթի թիվ 69-ում:

ները», բաղկացած էր տասնվեց հողվածներից (հողվածներ 93-108): Հիմնական իրավունքների գլուխը սկսվում էր սոցիալական իրավունքներից (հողվածներ 93-96), որոնց հետևում էին իրավահավասարությանը (հողվածներ 97-98) և քաղաքական իրավունքներին (հողվածներ 99-104) վերաբերող հողվածները: Գլուխը եզրափակում էին քաղաքացիների հիմնական պարտականությունները (հողվածներ 105-108): Քանի որ այն «հաղթանակած սոցիալիզմի» Սահմանադրություն էր, որպես հիմնական իրավունքների կրողներ ճանաչում էր բոլոր քաղաքացիներին, այլ ոչ թե միայն աշխատավորներին:

«Չարգացած սոցիալիզմի» 1978 թ. ՀՍՍՀ Սահմանադրությունում<sup>1</sup> հիմնական իրավունքների ծավալն ավելի ամբողջական էր: Սահմանադրության 5-րդ գլուխը կարգավորում էր ՀՍՍՀ քաղաքացիության և քաղաքացիների իրավահավասարության հարցերը, 6-րդ գլուխը («Հայկական ՍՍՀ քաղաքացիների հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները») սահմանում էր քաղաքացիների սոցիալ-տնտեսական (հողվածներ 38-45), քաղաքական (հողվածներ 46-49) և անձնական (հողվածներ 50-56) իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև հիմնական պարտականությունները (հողվածներ 57-67): Հիմնական իրավունքների մասին գլուխը չէր օգտագործում «մարդու իրավունքներ» հասկացությունը: Սահմանադրությունը ամրագրում էր բացառապես ՀՍՍՀ և միութենական մյուս հանրապետությունների քաղաքացիների իրավահավասարությունը, հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները (հողված 37 և հողված 31, մաս 3): Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար երաշխավորվում էին միայն օրենքով նախատեսված իրավունքներ ու ազատություններ (հողված 35):

Սահմանադրության 57-րդ հոդվածի առաջին մասը ուղղակիորեն ամրագրում էր իրավունքների և պարտականությունների միասնության սկզբունքը: Չգալիորեն ընդլայնված էր հիմնական պարտականությունների թիվը, ընդ որում դրանց մեծամասնությունն ուներ ընդգծված ավտորիտար բնույթ («պաշտպանել սովետական պետության շահերը, նպաստել նրա հզորության և հեղինակության ամրապնդմանը», «անհաշտ լինել հակահասարակական արարքների նկատմամբ» և այլն)<sup>2</sup>:

Իր պատմական զարգացման տարբեր փուլերում հիմնական իրավունքների դերը և նշանակությունը Խորհրդային Միությունում տարբեր կերպ են դրսևորվել: Եթե մինչև ստալինյան տոտալիտար դիկտատուրայի ավարտը հիմնական իրավունքները միայն դեկորատիվ նշանակություն ունեին, իսկ հիմնական իրավունքների տեսություն որպես այդպիսին ընդհանրապես ձևավորված չէր, ապա Ստալինի մահից և հատկապես ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո (1956 թ.) հայտարարված իրավական բարեփոխումների, «սոցիալիստական օրինականության» վերականգնման կարգախոսների ներքո Խորհրդային պետական իրավունքը սկսեց ավելի ինտենսիվ զբաղվել հիմնական իրավունքների հիմնահարցերով: Հիմնական իրավունքների նկատմամբ հետաքրքրության աճը մասամբ պայմանավորված էր նրանով, որ 1966 թ. ընդունվեցին ՄԱԿ-ի մարդու իրավունքներին վերաբերող երկու դաշնագրերը («Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին», ինչպես նաև «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին»), որոնց

<sup>1</sup> ՀՍՍՀ Չերագույն սովետի տեղեկագիր 1978/7, հոդ. 81:

<sup>2</sup> Խորհրդային Հայաստանի սահմանադրություններում հիմնական իրավունքների վերաբերյալ մանրամասն տե՛ս **G. Harutyunyan, A. Manasyan, V. Poghosyan**, «280 Grundrechte in Armenien// Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, Hrsg. Detlef Merten und Hans-Jürgen Papier, Bd. IX Grundrechte in Ostmittel- und Osteuropa, Heidelberg 2016, էջ 817-822:

մշակմանը Խորհրդային Միությունը գաղափարախոսական և քարոզչական նկատառումներով ակտիվ մասնակցություն էր ցուցաբերել<sup>1</sup>:

Թեև հիմնական իրավունքների սուբյեկտիվ բնույթը 1960-ական թվականներից սկսած ճանաչում ստացավ, սակայն մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները հիմնականում չէին ընկալվում որպես պետության հանդեպ իրավապահանջ ներկայացնելու իրավունքներ և սուբյեկտիվ իրավունքների լիարժեք բնույթ կարող էին ստանալ միայն ընթացիկ օրենսդրության մեջ իրենց կոնկրետա-ցունդ ստանալուց հետո<sup>2</sup>:

Հիմնական իրավունքների պատշաճ նորմատիվ ընկալումից զատ, սակայն, առավել լուրջ խոչընդոտ էր այն, որ բացակայում էին սահմանադրության անմիջական կիրառումն ապահովող գործուն մեխանիզմները, հատկապես սահմանադրական վերահսկողության ինստիտուտը:

Խորհրդային իրականությունում դատարաններում հիմնական իրավունքների նորմերի կիրառումը կոնկրետ գործերի լուծման համար խիստ հազվադեպ երևույթ էր: Թեև 1977 թ. Խորհրդային Սահմանադրության 173-րդ հոդվածի առաջին մասում ուղղակիորեն ամրագրվեց, որ ԽՍՀՄ Սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժ ունի, սակայն գործնականում իրավիճակը չփոխվեց: Սահմանադրության գործողությունը առաջին հերթին կախված էր համապատասխան օրենքի առկայությունից: Այս առումով հատկանշական է 1977 թ. Խորհրդային Սահմանադրության 58-րդ հոդվածը, որը քաղաքացուն իրավունք էր ընձեռում «օրենքով սահմանված կարգով» դատարանում բողոքարկելու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողությունները<sup>3</sup>: Սակայն Սահմանադրության այդ կարևորագույն հոդվածը մնաց որպես մեռած նորմ: Խորհրդային բյուրոկրատիային հաջողվեց ձգձգել համապատասխան կարգը նախատեսող օրենքի ընդունումը մինչև 1987թ., երբ այդ օրենքն այլևս ի գործու չէր էական ազդեցություն ունենալու փուլովոլ խորհրդային պետության պրակտիկայի վրա<sup>4</sup>:

Խորհրդային սահմանադրությունների շեշտադրումը սոցիալական իրավունքները (աշխատանքի, հանգստի, նյութական ապահովության և կրթության) և դրանց երաշխիքներն էին, որոնցով խորհրդային քարոզչամեքենան փորձում էր հակադրվել «բուրժուական» սահմանադրություններին<sup>5</sup> ընդգծելով սոցիալական իրավունքների «իրական» բնույթը՝ ի հակադրություն ամրագրված հիմնական իրավունքների

<sup>1</sup> ԽՍՀՄ-ը ստորագրեց այդ դաշնագրերը 1968 թ. մարտի 18-ին, վավերացրեց 1973 թ. ինկտեմբերի 16-ին: Դրանք ԽՍՀՄ-ի համար ուժի մեջ մտան 1976 թ. հունվարի 3-ին:

<sup>2</sup> Տե՛ս **A. Венгров**, նշվ. Աշխ., էջ 53: Ըստ խորհրդային առաջատար սահմանադրագետ Ա. Լեայրշկինի՝ սահմանադրական նորմերը մեծամասամբ չեն սահմանում իրավունքի սուբյեկտների վարքագծի մանրամասն կանոններ և ունեն այդ հարաբերությունների իրավական հիմքերի բնույթ: Советское государственное право, под ред. А. И. Лепешкина, Москва, 1971, էջ 58:

<sup>3</sup> «Պաշտոնատար անձանց այն գործողությունները, որոնք կատարվել են օրենքի խախտմամբ, լիազորությունների սահմանազանցությամբ և սահմանափակում են քաղաքացիների իրավունքները, կարող են օրենքով սահմանված կարգով զանգատարկվել դատարանում»: Նույնական նորմ էր պարունակում նաև ՀՍՍՀ 1978 թ. Սահմանադրության 56-րդ հոդվածի 2-րդ մասը:

<sup>4</sup> **Օ. Լուկսերհանդթ**, Գլուխ 1. Վարչական իրավունքի պատմական և համակարգային հիմքերը. Ընդհանուր ակնարկ //Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք. ուսումնական ձեռնարկ (Վ. Պողոսյանի և Ռ. Ռուբելի ընդհ. խմբ.), Երևան 2011, էջ 35-36: Ըստ Ա. Վենգերովի՝ 1977թ. Խորհրդային Միության ղեկավար Լ. Բրեժնևը, հանկարծ հասկանալով, որ քաղաքացին կարող է իրեն էլ դատի տալ, դժգոհել է արդարադատության նախարարին, որ իրավաբաններն իրեն փորձանքի մեջ են զգել, չբացատրելով, թե այդ դրույթն ինչ է նշանակում: A. Венгров, նշվ. աշխ., էջ 53:

<sup>5</sup> Սովետների երկրի Սահմանադրությունը, բառարան, Ա. Լուկյանով, Վ. Կուդրյավցև, Գ. Շահնազարով (ընդհ. խմբ.), Երևան, 1984, էջ 8:

«ձևական» բնույթի: Սոցիալական իրավունքները դրոշ էին բուրժուական երկրների դեմ ԽՍՀՄ-ի գաղափարական պայքարում՝ իբրև սոցիալիստական կարգերի «գե-րազանցության» ապացույց:

Ի մի բերելով խորհրդային սահմանադրությունների բնորոշ գծերը որպես հա-կոտնյա իրավական, սահմանադրական պետության լիբերալ սկզբունքներին՝ Օ. Լուխտերհանդը ընդգծում է հետևյալ հակադրությունները. «իշխանության միաս-նություն («ամբողջ իշխանությունը խորհուրդներին»)՝ իշխանությունների բաժան-ման փոխարեն, դասակարգային իրավունքներ՝ մարդու իրավունքների փոխարեն, ժողովրդական ինքնիշխանության, բազմակուսակցական համակարգի և ժո-ղովրդավարական ընտրությունների փոխարեն մեկ պետական կուսակցության դե-կավարություն, ճշմարտության հավակնություն և միասնական պետական գաղա-փարախոսության գերիշխում կարծիքների ազատության և բազմակարծության փո-խարեն, մարտնչող աթեիզմ՝ կրոնի ազատության փոխարեն, պետական սեփակա-նություն (արտադրության միջոցների նկատմամբ)՝ մասնավոր սեփականության փո-խարեն, միասնական կազմակերպություններով ձևավորված հասարակություն՝ քա-ղաքացիական հասարակության փոխարեն՝ քաղաքացիների ազատ միավորումնե-րի հիման վրա (...), արդարադատության կողմնակալություն և կախվածություն՝ դա-տական անկախության և դատավորների անկողմնակալության փոխարեն»<sup>1</sup>:

## II. Հիմնական իրավունքները 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ

1990 թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի անկա-խության մասին հռչակագիրը<sup>2</sup>, որն ազդարարեց «անկախ պետականության հաս-տատման գործընթացի սկիզբը»: Պատմական, քաղաքական և իրավական հսկա-յական նշանակություն ունեցող այդ փաստաթղթում ամրագրվեցին Հայաստանի նո-րանկախ պետականության հիմնական սկզբունքները, որոնք պետք է հիմք դառնա-յին Հայաստանի նոր Սահմանադրության մշակման, ինչպես նաև գործող Սահմա-նադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարման համար<sup>3</sup>: 1990 թ. նոյեմբերի 5-ին Հայաստանի խորհրդարանը որոշում ընդունեց սահմանադրական հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, որի հիմնական խնդիրը նոր Սահմանադ-րության մշակումն էր<sup>4</sup>: 1990թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի անկա-խության մասին հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտե-րի մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ մինչև Հայաստանի Հանրապե-տության Սահմանադրության ընդունումը դադարեցվում էին 1978 թ. Սահմանադ-րության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին Հայաստանի անկա-խության մասին հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած օրենք-ների: Այդպիսով, 1990 թ. դեկտեմբերի 10-ի սահմանադրական օրենքով Հռչակա-գիրը ձեռք բերեց 1978 թ. Սահմանադրությունից ավելի բարձր կարգավիճակ:

Որպես կարևորագույն հիմնական իրավունքներ՝ Հռչակագրի 9-րդ կետը ան-րագրում էր խոսքի, մանուկի, խղճի ազատությունները, այսինքն՝ այն ազատություն-ները, որոնք սոցիալիզմի տարիներին պետության խիստ վերահսկողության ներքո էին: Նույն կետում սահմանվում էր, որ Հայաստանի Հանրապետությունն իր տա-

<sup>1</sup> Օ. Լухտերհандт, Введение // Комментарий к Конституции Российской Федерации. В 2-х томах. Под ред. Бернда Визера, Том I, Москва, 2018 г., էջ 6:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1990/16:

<sup>3</sup> Հայաստանի անկախության հռչակագիր, կետ 12: Առավել մանրամասն տե՛ս Ա. Վաղարշ-յան, Հայաստանի անկախության հռչակագիրը և ժողովրդավարական, իրավական հասա-րակության ռազմավարության օրենսդրական կենսագործումը, 1990-1991 թթ. // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2015, № 3 (18), էջ 3-15:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1990/21:



րածքում ապահովում է բազմակուսակցություն և կուսակցությունների իրավահավասարությունը՝ դրանով իսկ վերջ դնելով միակուսակցական համակարգին և ՀՍՍՀ 1978 թ. Սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրված կոմունիստական կուսակցության ղեկավար դերին: Հռչակագրի 8-րդ կետը, ամրագրելով սեփականության բազմաձևությունը, վերացրեց սոցիալիստական սեփականության մենաշնորհը, որի վրա էր հիմնված սոցիալիստական տնտեսական համակարգը:

Գերագույն խորհրդի 1991թ. ապրիլի 1-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետությունը միացավ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրին և դրան կից կամ ընտիր արձանագրությանը<sup>1</sup>: Այդ որոշմամբ միաժամանակ սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության բոլոր օրենսդրական ակտերը պետք է համապատասխանեցվեն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի դրույթներին: Մինչ այդ Հայաստանի խորհրդարանը ճանաչում էր այդ դրույթների գերակայությունը հանրապետության օրենքների նկատմամբ (որոշման 4-րդ կետը): Այսպիսով, Գերագույն խորհրդի 1991 թ. ապրիլի 1-ի որոշմամբ այդ ակտերը Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերեցին անմիջականորեն գործող նորմերի կարգավիճակ: ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրին Հայաստանը միացավ 1993 թ. հունիսի 9-ին<sup>2</sup>, սակայն այդ դաշնագրի նորմերը չստացան այն նույն կարգավիճակը, ինչ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագիրը:

1995 թ. Սահմանադրության հիմնական իրավունքների գլխի մշակման ժամանակ սահմանադրական հանձնաժողովը մեծ չափով հենվել է ՄԱԿ-ի վերոհիշյալ փաստաթղթերի դրույթների վրա՝ դրանք բարձրացնելով սահմանադրական կարգավիճակի, ինչպես նաև օգտվել է դրանցում տեղ գտած սահմանափակումների հիմքերից<sup>3</sup>: Հիմնական իրավունքների ցանկի ստեղծման վրա մեծ էր, անկասկած, նաև Ռուսաստանի 1993 թ. դեկտեմբերի 12-ի Սահմանադրության ազդեցությունը, ինչն արտահայտվում էր ինչպես բազմաթիվ հիմնական իրավունքների բովանդակությունում, այնպես էլ հիմնական իրավունքների ցանկի կառուցվածքում<sup>4</sup>:

1995 թ. Սահմանադրությունը քաղաքացիության վերաբերյալ 14-րդ հոդվածից հետո ամրագրում էր մարդկանց և քաղաքացիների իրավահավասարության (հոդվածներ 15-16), անձնական ազատություններին (հոդվածներ 17-24), քաղաքական իրավունքներին (հոդվածներ 25-27) և սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքներին (հոդվածներ 28-37) վերաբերող դրույթներ: Սահմանադրության 38-42 հոդվածները նվիրված էին մարդու իրավունքների պաշտպանությանը, այդ թվում՝ քրեական դատավարական երաշխիքներին: Սահմանադրության 44-45 հոդվածները վերաբերում էին հիմնական իրավունքների սահմանափակումների խնդրին, իսկ 46-48 հոդվածները՝ մարդու և քաղաքացու պարտականություններին:

Թեև 1995 թ. Սահմանադրության հիմնական իրավունքների հայեցակարգը արմատապես տարբերվում էր ՀՍՍՀ 1978 թ. Սահմանադրությունից, այդուհանդերձ հիմնական իրավունքների դեկորատիվ բնույթի վերաբերյալ խորհրդային ընկա-

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1991/7:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1991/11:

<sup>3</sup> Տե՛ս **Վ.Նազարյան**, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը. Ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Երևան, 1995 թ., էջ 30:

<sup>4</sup> Այդուհանդերձ, ի տարբերություն Ռուսաստանի Սահմանադրության՝ Հայաստանի Սահմանադրության հիմնական իրավունքների ցանկում չընդգրկվեցին, մասնավորապես, այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են արժանապատվության իրավունքը, հանրագրերի իրավունքը, պետական ծառայության հավասար հիմունքներով անցնելու իրավունքը, քաղաքական ապաստանի իրավունքը, օտար պետությանը հանձնելու արգելքը, պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքը:

լումն ամբողջությամբ չհաղթահարվեց: Հիմնական իրավունքների սահմանադրական երաշխիքները շարունակեցին իրենց վրա կրել նախկին սոցիալիստական իրավունքի, իրավագիտակցության դրոշմը: Չնայած հիմնական իրավունքների բավական արդիական ցանկի սահմանադրական ամրագրմանը՝ դրանք գործնականում մեծ դերակատարում չունեին: Առանցքային պատճառն այն էր, որ Սահմանադրությունը չէր նախատեսում դրանք կյանքի կոչելու անհրաժեշտ մեխանիզմներ, ինչպես նաև պարունակում էր մի շարք բովանդակային թերացումներ:

Հիմնական իրավունքների գործնականում իրացման երաշխիքների և մեխանիզմների տեսանկյունից առանձնահատուկ դերակատարում ունի սահմանադրական դատարանը: Թեև 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ներդրեց սահմանադրական արդարադատության ինստիտուտը, այդուհանդերձ սահմանադրական դատարանը նախագծված էր որպես ծայրահեղ թույլ ինստիտուտ ինչպես իր լիազորությունների, այնպես էլ դիմող սուբյեկտների առումով: Սահմանադրությունը չէր նախատեսում նորմերի կոնկրետ վերահսկողության ինստիտուտ, այսինքն՝ նախատեսված չէր դատարանի կողմից կոնկրետ գործով սահմանադրական դատարան դիմելու հնարավորություն, երբ դատարանը գտնում էր, որ կիրառման ենթակա իրավական նորմը հակասում է Սահմանադրությանը: Շատ ավելի բացասական էր այն փաստը, որ Սահմանադրությունը չնախատեսեց սահմանադրական զանգատի որևէ տարատեսակ (ո՛չ նորմերի և ո՛չ էլ դատարանների վճիռների դեմ): Արդյունքում սահմանադրական դատարանը մինչև 2006 թ. հնարավորություն չունեցրեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին վերաբերող կոնկրետ գործեր: Այդ հսկայական բացերը որևէ կերպ չէին կարող փոխհատուցվել նաև նորմերի վերացական վերահսկողության ինստիտուտի միջոցով, քանի որ Սահմանադրությունը նախատեսել էր դիմող սուբյեկտների չափազանց սահմանափակ կազմ միայն Հանրապետության Նախագահը կամ պատգամավորների առնվազն մեկ երրորդը (հոդված 101, կետ 1 և 2): Այդ չափազանց մեծ քվորումը սահմանադրական դատարան դիմելը գործնականում անհնարին էր դարձնում պատգամավորների համար<sup>1</sup>:

Ի տարբերություն խորհրդային Սահմանադրության՝ 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հռչակում էր դատական իշխանության անկախության սկզբունքը<sup>2</sup>, ինչը, իհարկե, կարևոր առաջընթաց էր: Այդուհանդերձ, անկախության սկզբունքի հռչակումը հետևողականորեն չէր ապահովված համապատասխան երաշխիքներով, և դատական իշխանությունն անթաքույց կերպով դրված էր գործադիր իշխանության ազդեցության տակ: Դատական մարմինների անկախության երաշխավորը Հանրապետության Նախագահն էր (հոդված 94, մաս 1), ով գլխավորում էր արդարադատության խորհուրդը, իսկ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն էին (հոդված 94, մաս 2): Խորհրդի կազմի մեջ մտնող մնացած 14 անդամները ևս նշանակվում էին Հանրապետության Նախագահի կողմից (հոդված 94, մաս 3): Հանրապետության Նախա-

<sup>1</sup> Բոլորովին էլ պատահական չէ, որ 1996-2004 թթ. պատգամավորների կողմից Սահմանադրական դատարան է ներկայացվել ընդամենը երկու դիմում: Տե՛ս **Գ. Հարությունյան**, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005, էջ 291:

<sup>2</sup> «Արդարադատություն իրականացնելիս՝ դատավորը և սահմանադրական դատարանի անդամը անկախ են և ենթարկվում են միայն օրենքին» (հոդված 97, մաս 1): «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, *անկախ և անկողմնակալ դատարանի* կողմից իր գործի իրապարակային քննության իրավունք» (հոդված 39, ընդգծումը՝ հեղինակների): «*Դատական մարմինների անկախության* երաշխավորը Հանրապետության Նախագահն է» (հոդված 94, մաս 1, ընդգծումը՝ հեղինակների):

գահը, իր իսկ զլխավորած և նշանակած խորհրդի առաջարկությամբ, նշանակում և պաշտոնանկ էր անում դատավորներին: Դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները արդարադատության խորհուրդը կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն էր ներկայացնում արդարադատության նախարարի առաջարկով (հոդված 95, կետ 1): Վերոհիշյալի համատեքստում, եթե նաև հաշվի առնենք 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ Հանրապետության Նախագահի գերակա դիրքը, դժվար չէ հետևություններ անել դատական իշխանության անկախության սահմանադրական սկզբունքի հռչակագրային և ձևական լինելու մասին:

1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ուղղակիորեն չէր ամրագրում *արդյունավետ* դատական պաշտպանության հիմնական իրավունքը, այլ սահմանում էր միայն իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը (Սահմանադրության 38-րդ հոդված): Մինչդեռ դատական պաշտպանության իրավունքին ներկայացվող բովանդակային պահանջը հենց դրա «արդյունավետ» լինելն է և ոչ թե միայն դատական համակարգի առկայությունը:

1995 թ. Սահմանադրությունը չամրագրեց մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, չնայած որ ինչպես սահմանադրական հանձնաժողովի 1994 թ. ապրիլի 20-ի նախագիծը (հոդված 48), այնպես էլ ընդդիմադիր վեցյակի<sup>1</sup> նախագիծը նախատեսում էին նման ինստիտուտի ստեղծում<sup>2</sup>:

Չգտելով հաղթահարել խորհրդային ավանդույթները և Սահմանադրությունը դարձնել ռեալ գործող ակտ՝ Սահմանադրության 6-րդ հոդվածն ամրագրում էր ամբողջ Սահմանադրության անմիջական գործողության սկզբունքը: Այդուհանդերձ, իրականում դա պատրանքային նորմ էր երկու պատճառով. նախ՝ չկային անմիջական գործողությունն ապահովող մեխանիզմներ, և երկրորդ՝ Սահմանադրության անմիջական գործողությունը չի կարող անխտիր տարածվել ամբողջությամբ վերցրած Սահմանադրության բոլոր նորմերի վրա: Սահմանադրության անմիջական գործողությունը բոլոր նորմերի վրա տարածելով՝ հարաբերականացվում էր նաև հիմնական իրավունքների անմիջական գործողությունը:

### III. 2005 թ. սահմանադրական փոփոխությունները և հիմնական իրավունքները

Հիմնական իրավունքների սահմանադրական երաշխիքների տեսանկյունից շրջադարձային էին 2005թ. սահմանադրական փոփոխությունները<sup>3</sup>, որոնք հիմնական իրավունքների ոլորտում մի քանի կարևոր առաջընթաց արձանագրեցին:

<sup>1</sup> Վեցյակի կազմում ընդգրկված էին ՀՅԴ-ն և ՀՌԱԿ-ը, ՍԻՄ-ը, Հանրապետական, Դեմոկրատական և Ազրարային-ժողովրդավարական կուսակցությունները:

<sup>2</sup> Ըստ սահմանադրական հանձնաժողովի 1994 թ. նախագծի՝ բացի դատարանի վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելու իրավունքից (նախագծի 48-րդ հոդվածի 2-րդ մաս), մարդու իրավունքների պաշտպանը կարող էր նորմերի վերացական վերահսկողության վարույթի շրջանակում դիմել սահմանադրական դատարան «քաղաքացու սահմանադրական իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների, Ազգային ժողովի որոշումների և Հանրապետության նախագահի հրամանագրերի կապակցությամբ» (հոդված 104 կետ 4), տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 23.04.1994: Նմանատիպ դրույթ էր նախատեսում նաև ընդդիմադիր վեց կուսակցությունների նախագիծը, ըստ որի՝ սահմանադրական դատարանը մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությամբ եզրակացություն էր տալիս քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտման մասին (հոդված 90, մաս 2 գ), տե՛ս «Երկիր» օրաթերթ, 15.6.1994: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ էր նախատեսում նաև Ռուսաստանի Սահմանադրությունը (հոդված 103, մաս 1, «Յ» ենթակետ):

<sup>3</sup> Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի ՀՀ հանրաքվեով, ՀՀՊՏ 2005.12.05/ հատուկ թողարկում, հոդ. 1426:

Հիմնական իրավունքները կրեցին *նշանակալի բովանդակային փոփոխություններ*, որոնք զգալիորեն պայմանավորված էին 2001թ. հունվարի 25-ին Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցությամբ: Հայաստանը ստորագրեց և վավերացրեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան և նրա թիվ 1, 4, 6 և 7 արձանագրությունները<sup>1</sup>: Բարեփոխված Սահմանադրությունը վերացրեց բոլոր այն տարբերությունները, որոնք կարող էին դիտվել որպես առերևույթ հակասություններ Սահմանադրության և Եվրոպական կոնվենցիայի միջև: Եվրոպական կոնվենցիայի նման Հայաստանի Սահմանադրությունը հավաքների ազատությունը (հոդված 29), ազատ տեղաշարժվելու իրավունքը (հոդված 25) և կրթության իրավունքը (հոդված 39), հավասարության ընդհանուր և հատուկ իրավունքները (հոդված 14.1) երաշխավորեց յուրաքանչյուր մարդու, այլ ոչ թե միայն Հայաստանի քաղաքացիների համար, ինչպես դա նախատեսված էր Սահմանադրության 1995 թ. խմբագրությունում<sup>2</sup>: Որպես մարդու իրավունքներ ամրագրվեցին նաև աշխատանքի ընտրության ազատության (հոդված 32), բավարար կենսամակարդակի (հոդված 34), սոցիալական ապահովության իրավունքները (հոդված 37): Հիմնական իրավունքների ցանկը ընդլայնվեց հանրագրերի, հանրային ծառայության ընդունվելու, սպառողների շահերի պաշտպանության, առողջ շրջակա միջավայրի իրավունքներով: Արգելվեց հարկադիր աշխատանքը (32 հոդվածի 5-րդ մաս), ինչպես նաև մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունումը (նույն հոդվածի 4-րդ մաս): Սահմանվեց մահապատժի արգելք (հոդված 15)<sup>3</sup>:

**Մարդը հռչակվեց բարձրագույն արժեք** (3-րդ հոդված, մաս 1), ինչով արտահայտվում է այն կարևոր գաղափարը, որ պետության գոյությունն ինքնանպատակ չէ, պետությունը հաստատվում է հանուն մարդու, նրան ծառայելու համար և ոչ թե հակառակը:

Համապարփակ ամրագրում ստացավ *մարդու արժանապատվությունն* ինչպես որպես հիմնարար արժեք, այնպես էլ մարդու սուբյեկտիվ իրավունք (հոդվածներ 3 և 14):

Հիմնական իրավունքների ցանկի կարևոր հայեցակարգային լրացում էր *ընդհանուր ազատության իրավունքի ամրագրումը* Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մասում. «Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները»: Ընդհանուր ա-

<sup>1</sup> ՀՀ Ազգային ժողովի 2002 թ. մարտի 20-ի որոշումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան, դրան կից 1952 թվականի մարտի 20-ին Փարիզում ստորագրված արձանագրությունը, 1963 թվականի սեպտեմբերի 16-ին Ստրասբուրգում ստորագրված թիվ 4 արձանագրությունը և 1984 թվականի նոյեմբերի 22-ին Ստրասբուրգում ստորագրված թիվ 7 արձանագրությունը վավերացնելու մասին, ՀՀՊՏ 2002.04.12/12 (187), հոդ. 243, Ն-264-2: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ից:

<sup>2</sup> Քանի որ 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ նախադասության համաձայն վավերացված միջազգային պայմանագրերում սահմանված նորմերը կիրառման գերակայություն ունեին Հայաստանի Հանրապետության օրենքների նկատմամբ, ապա Եվրոպական կոնվենցիայի վերոհիշյալ դրույթներն օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ արդեն իսկ գործող իրավունք էին Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական կոնվենցիայի վավերացումից հետո: Սահմանադրական փոփոխություններով այդ կատեգորիայի անձանց իրավունքների պաշտպանությունը բարձրացվեց սահմանադրական մակարդակի:

<sup>3</sup> Հայաստանի 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ ժամանակավորապես նախատեսված էր մահապատժը՝ որպես բացառիկ պատժամիջոց առանձնապես ծանր հանցագործությունների համար (հոդված 17): Սակայն 2003թ. սեպտեմբերի 29-ին Հայաստանի խորհրդարանը վավերացրեց Եվրոպական կոնվենցիայի թիվ 6 արձանագրությունը, որն արգելում էր մահապատժը:

գատության իրավունքի ամրագրմամբ հիմնական իրավունքների ցանկը ստացավ ամբողջական տեսք, քանի որ համապարփակ ձևով սահմանադրական պաշտպանություն տրվեց մարդու ազատության բոլոր այն դրսևորումներին, որոնք ընդգրկված չեն որևէ հատուկ հիմնական իրավունքի պաշտպանության առարկայի մեջ:

Հիմնական իրավունքների կիրառման ոլորտը ընդլայնող կարևոր դրույթ է նաև Սահմանադրության նոր՝ 42.1 հոդվածը, որը հիմնական իրավունքները տարածում է **իրավաբանական անձանց վրա** այնքանով, որքանով դրանք կիրառելի են իրավաբանական անձանց նկատմամբ:

Հիմնական իրավունքների հետ կապված, վերը նշված բովանդակային նշանակալի առաջընթացի հետ մեկտեղ, 2005 թ. սահմանադրական բարեփոխումների կարևորագույն արդյունքներից մեկը հիմնական իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմների ամրագրումն էր:

Հիմնական իրավունքներն ուղղակիորեն ամրագրելով որպես անմիջականորեն գործող իրավունք (հոդված 3, մաս 3) սահմանադիրը միաժամանակ նախատեսեց դրանց դատական պաշտպանության երկու կարևորագույն մեխանիզմները՝ **անհատական զանգատը և նորմերի կոնկրետ վերահսկողությունը**: Անհատական զանգատով սահմանադրական դատարան դիմելու իրավունք ստացավ յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը (101-րդ հոդվածի 6-րդ կետով): Նորմերի կոնկրետ վերահսկողության հարցով որպես դիմող սուբյեկտներ նախատեսվեցին դատարաններն ու գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով (հոդված 101 կետ 7): Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի՝ նման արմատական ընդլայնումը սահմանադրական արդարադատության ինստիտուտը բարձրացրեց բոլորովին այլ մակարդակի՝ այն դարձնելով Սահմանադրության գերակայության և հիմնական իրավունքների անմիջական գործողության ապահովման իրական մեխանիզմ<sup>1</sup>: Հեշտացվեց նաև պատգամավորների կողմից վերացական սահմանադրական վերահսկողության համար սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը՝ քվորում սահմանելով պատգամավորների առնվազն 1/5-րդը (նախկինում՝ 1/3-րդն էր):

Սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրվեց **իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների**, այդ թվում՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու **իրավունքը**:

Դատական իշխանության անկախության ապահովման տեսանկյունից նշանակալի քայլ էր **Արդարադատության խորհրդի կազմի** արմատական **վերակառուցումը**, որը բաղկացած էր դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով ընտրված ինը դատավորից, ինչպես նաև Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներից (հոդված 94.1, մաս 2): Արդարադատության խորհրդի կազմից դուրս եկան գործադիր իշխանության և դատախազության ներկայացուցիչները: Չնայած ոչ լիարժեք լուծումներին<sup>2</sup>, այդուհանդերձ այսպիսի կազմը անհամեմատ

<sup>1</sup> Սահմանադրական դատարան ներկայացված անհատական զանգատների և նորմերի կոնկրետ վերահսկողության դիմումների 2006-2018 թթ. վիճակագրությունը տե՛ս ստորև բերվող հավելվածում:

<sup>2</sup> Առավել մանրամասն տե՛ս Ն. Սարգսյան, Ս. Եսայան, Բարձրագույն դատական խորհրդի կազմն ու կազմավորման կարգը. 2015 թվականի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կարգավորումները և եվրոպական չափորոշիչները // «Դատական իշխանություն», հունվար-փետրվար, 2017, 1-2 (211-212), էջ 34-36:

առաջընթաց էր նախկինի նկատմամբ:

Նախատեսվեց **մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը** (հոդված 83.1), որին հիմնական իրավունքների պաշտպանության գործում կարևոր լիազորություններ վերապահվեցին: Սահմանադրության 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն յուրաքանչյուր ոք իրավունք ստացավ «իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության» խնդրով դիմելու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ: Բացի այդ, մարդու իրավունքների պաշտպանին վերապահվեց սահմանադրական դատարան դիմելու իրավունք՝ նորմատիվ իրավական ակտերի՝ Հայաստանի Սահմանադրության 2-րդ գլխին համապատասխանության հարցերով (Սահմանադրության 101-րդ հոդվածի 8-րդ կետ): Պաշտպանին վերապահված այս լիազորությունը վերացական սահմանադրական վերահսկողության միջոցով հիմնական իրավունքներին հակասող նորմատիվ իրավական ակտերը բացահայտելու և անվավեր ճանաչելու կարևոր մեխանիզմ է:

**Հիմնական իրավունքների սահմանափակումների** նկատմամբ պահանջների առումով 2005 թ. սահմանադրական փոփոխությունները լրացուցիչ և գործնականում կարևոր երաշխիք ամրագրեցին. 43-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանեց, որ «մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»: Այս դրույթի գործնական նշանակությունը հատկապես մեծ է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վավերացումից հետո, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայում հիմնական իրավունքների սահմանափակումներին տրված մեկնաբանությունները և դրանցում սահմանված շրջանակը Հայաստանի համար պարտադիր դարձան Սահմանադրության ուժով:

Թեև 2005 թ. սահմանադրական փոփոխությունները շրջադարձային էին հիմնական իրավունքների երաշխավորման առումով, այդուհանդերձ դրանք ամբողջականորեն չկարողացան լուծել «մարդակենտրոն» սահմանադրության հիմնախնդիրները: Մի շարք առանցքային հարցերի տրվեցին թերի լուծումներ, ինչի հետևանքով հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրական երաշխիքները և դրանց գործնական կենսագործման մեխանիզմները մնացին անկատար<sup>1</sup>:

#### IV. Հիմնական իրավունքների ընդհանուր բնութագիրը 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում

2015 թ. Սահմանադրական բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի ամրապնդումն է ինչպես բովանդակային, այնպես էլ ընթացակարգային առումներով: Բնութագրելով հիմնական իրավունքների հարցում 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության առաջընթացի հիմնական վեկտորները՝ պետք է նշել, որ այն՝

- հստակեցրեց հիմնական իրավունքների բնույթը՝ որպես սուբյեկտիվ իրավունքներ,
- մարդուն՝ որպես բարձրագույն արժեքի, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները (հոդված 3) դասեց Սահմանադրության անփոփոխ հոդվածների թվին (հոդված 203),
- սահմանազատեց անմիջականորեն գործող հիմնական իրավունքներն օրենսդրական երաշխիքներից ու պետության նպատակներից,

<sup>1</sup> 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 2-րդ գլխի մանրամասն վերլուծությունը տե՛ս **Michael Sachs**, Zur Umgestaltung des Grundrechtskatalogs im Rahmen der Verfassungsreform in Armenien, Osteuroparecht 2014, Heft 4, էջ 468-484:

- հստակեցրեց հիմնական իրավունքների սահմանափակումների հիմքերը և դրանց ներկայացվող պահանջները,  
 - ամրագրեց մի շարք նոր հիմնական իրավունքներ,  
 - զարգացրեց հիմնական իրավունքների պաշտպանության մեխանիզմները,  
 - հիմնական իրավունքներին վերաբերող գլխին հաղորդեց տրամաբանական կուռ կառուցվածք<sup>1</sup>:

Առանձնահատուկ պետք է ընդգծել **Սահմանադրության 3-րդ հոդվածի նշանակությունը**, որը դասվել է Սահմանադրության անփոփոխելի հոդվածների շարքին՝ 1-ին և 2-րդ հոդվածների կողքին (հոդված 203): Վերջիններիս հետ 3-րդ հոդվածը յուրօրինակ «փոքր սահմանադրություն» է Սահմանադրության մեջ: Եթե Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածները տալիս են Հայաստանի Հանրապետության որպես ինքնիշխան պետության հիմնական բնութագիրը, ապա 3-րդ հոդվածն ընդգծում է, որ այդ պետությունը ստորադասված է մարդուն, իսկ նրա արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետության նպատակն է:

3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ **մարդու արժանապատվությունն անօտարելի է** (3-րդ հոդված, 1-ին մաս), այսինքն՝ արժանապատվությունը մարդուն ներհատուկ է հենց նրա գոյության փաստով: Փոփոխված Սահմանադրությունում այս դրույթն արտացոլվել է սահմանադրական կարգի հիմունքների գլխում<sup>2</sup>, որպեսզի հստակեցվի մարդու արժանապատվության և հիմնական իրավունքների միջև անխզելի կապը. արժանապատվությունը մարդու իրավունքների անքակտելի հիմքն է. առանց մարդու արժանապատվության չկան հիմնական իրավունքներ, առանց հիմնական իրավունքների չկա մարդու արժանապատվություն: Քանի որ մարդու արժանապատվությունը բոլոր հիմնական իրավունքների և ազատությունների աղբյուրն է, դրանց անքակտելի հիմքը, ապա հիմնական իրավունքները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն՝ ելնելով արժանապատվության սկզբունքից և այն իրականացնելու նպատակով:

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է պետության պարտականությունները հիմնական իրավունքների նկատմամբ՝ նախատեսելով այդ պարտականությունների երկու դրսևորում: Հանրային իշխանությունը պարտավոր է մի կողմից՝ **«հարգել»**, իսկ մյուս կողմից՝ **«պաշտպանել»** հիմնական իրավունքները և ազատությունները: **«Հարգելը»** պետության պասիվ վարքագիծն է՝ հիմնական իրավունքով պաշտպանված բարիքին միջամտելուց ձեռնպահ մնալու միջոցով (պետությունից պաշտպանվելու իրավունք): Ի տարբերություն դրա՝ հիմնական իրավունքները **«պաշտպանելը»** պետության վրա դնում է պոզիտիվ գործողություններ ձեռնարկելու պարտականություն՝ ի շահ հիմնական իրավունքի կրողների (ֆիզիկական և իրավաբանական անձինք): Պետությունը, ի դեմս օրենսդրի ու գործադիրի, պետք է նախատեսի համապատասխան կառուցակարգեր և ընթացակարգեր, ձեռնարկի այլ անհրաժեշտ միջոցառումներ, որոնց օգնությամբ հիմնական իրավունքների կրողները կկարողանան իրականացնել իրենց իրավունքները: Այն, թե ի՞նչ տեսակի միջոցառումներ պետք է ձեռնարկեն հանրային իշխանության մարմինները՝ պաշտպանության պարտականությունը կատարելու համար, կախված է կոնկրետ հիմնական իրավունքի բովանդակությունից:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասից հրաժարվելու միջոցով 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը հստակեցրել է,

<sup>1</sup> Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 45-47:

<sup>2</sup> 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում այն նախատեսված էր մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների գլխում՝ 14-րդ հոդվածում:

որ հիմնական իրավունքների միակ հասցեատերը *հանրային իշխանությունն է*: 47-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուր անձի վրա դրված էր այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու պարտականություն, ինչը թույլ էր տալիս Սահմանադրության ու ժովհիմնական իրավունքների գործողությունը ուղղակիորեն տարածել մասնավոր անձանց միջև հարաբերությունների վրա:

1995 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, հետևելով խորհրդային սահմանադրությունների օրինակին, հիմնական իրավունքների ցանկում ներառել էր բազմաթիվ **սոցիալական իրավունքներ**<sup>1</sup>, որոնց մի մասն իրականում սոցիալական և մշակութային ոլորտում պետության խնդիրներ էին<sup>2</sup>: Նույն մոտեցումը, ըստ էության, պահպանվել էր նաև 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում<sup>3</sup>, չնայած որ Սահմանադրությունը փորձ էր կատարել մասնակիորեն լուծել այդ խնդիրը՝ 48-րդ հոդվածում ամրագրելով պետության հիմնական խնդիրները տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում: Մինչդեռ սահմանադրական մակարդակ բարձրացված այս «սոցիալական իրավունքների» մեծամասնությունը, չնայած իրենց ձևակերպումներին, անմիջականորեն գործող սուբյեկտիվ իրավունքներ չէին:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում սոցիալական ոլորտին վերաբերող բոլոր այն դրույթները, որոնք պարտավորեցնում են միայն օրենսդիրին, ձևակերպված են որպես օրենսդրական երաշխիքներ<sup>4</sup> Սահմանադրության 3-րդ գլխում: Այսինքն, այդ իրավունքները կարող են իրագործվել և ենթակա լինել դատական պաշտպանության միայն այն բանից հետո, երբ դրանց բովանդակությունն ու ծավալը հստակեցվեն օրենքով: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սոցիալական իրավունքների, սոցիալական ոլորտում օրենսդրական երաշխիքների և պետության նպատակների մեծ մասի իրականացման ծավալները մեծապես կախված են պետության տնտեսական հնարավորություններից: Մինչդեռ, սոցիալական իրավունքների իրավական ռեժիմի հավասարեցումը «դասական» հիմնական իրավունքներին առաջացնում է սխալ և անիրագործելի ակնկալիք, որ սոցիալական իրավունքները պետք է նույն կերպ անմիջականորեն գործեն: Եվ ընդհակառակը, քանի որ իրականում սոցիալական իրավունքները ունեն ավելի ցածր աստիճանի պարտադիրություն պետության համար, գործնականում այդ մոտեցումը մեխանիկորեն տարածվում է նաև «դասական» հիմնական իրավունքների վրա՝ դրանով ստեղծելով տպավորություն, թե «դասական» իրավունքները ևս խիստ պարտադիր բնույթ չունեն պետության համար:

Ասվածը չի նշանակում, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը զերծ է առանձին սոցիալական իրավունքների սահմանադրական ամրագրումից՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ (օրինակ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանությունը պետության կողմից (հոդված 37, մաս 4), կրթության իրավունքը (հոդված 38), պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնությունը (հոդված 64, մաս 1):

Միաժամանակ, Սահմանադրության 82-85-րդ հոդվածների՝ անմիջականորեն

<sup>1</sup> Օրինակ՝ բավարար կենսամակարդակի իրավունքը, այդ թվում՝ բնակարանի իրավունքը (հոդված 31), սոցիալական ապահովության իրավունքը (հոդված 33), բնակչության առողջության պահպանման իրավունքը (հոդված 34, մաս 1), գիտության նվաճումներից օգտվելու իրավունքը (հոդված 36):

<sup>2</sup> Օրինակ՝ պետությունն իրականացնում է բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստում է ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը (հոդված 34, մաս 2):

<sup>3</sup> Օրինակ՝ բավարար կենսամակարդակի իրավունքը, այդ թվում՝ բնակարանի իրավունքը (հոդված 34), շրջակա միջավայրի իրավունքը (հոդված 33.2), սոցիալական ապահովության իրավունքը (հոդված 37), գիտության նվաճումներից օգտվելու իրավունքը (հոդված 40):

<sup>4</sup> Սահմանադրության 82-85-րդ հոդվածներում ամրագրված են աշխատանքային պայմանների, սոցիալական ապահովության, արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի, առողջության պահպանության իրավունքները:



չգործող իրավունքներ հանդիսանալը ամենևին էլ չի նշանակում, որ պետությունը կարող է դրանք ընդհանրապես անտեսել: Բացի նրանից, որ օրենսդրի կողմից համապատասխան օրենքների ընդունումն իրավական պարտականություն է, Սահմանադրության նշված դրույթների իրագործման ծավալը պայմանավորված է ժողովրդավարական և քաղաքական գործընթացներով, և կարող է հանգեցնել իշխող քաղաքական ուժի քաղաքական պատասխանատվության: Ինչ վերաբերում է Սահմանադրության 86-րդ հոդվածում ամրագրված՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներին, ապա դրանք սերտ կապի մեջ են վերոհիշյալ 82-85-րդ հոդվածների հետ, իսկ դրանց իրագործումն ապահովելու նպատակով 87-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Կառավարությունն այդ մասին իր ամենամյա զեկույցի շրջանակներում (հոդված 156) տեղեկատվություն է ներկայացնում Ազգային ժողով<sup>1</sup>:

2015թ. Խմբագրությամբ Սահմանադրության մեջ արմատական վերանայման է ենթարկվել *հիմնական իրավունքների սահմանափակումների* կարգավորումը: Դա վերաբերում է ինչպես հիմնական իրավունքների սահմանափակման հիմնական ձևի՝ օրենքի վերապահման ամրագրմանը, այնպես էլ՝ սահմանափակումների հիմքերին: 2015թ. Խմբագրությամբ Սահմանադրությունը հրաժարվել է հիմնական իրավունքների ընդհանուր սահմանափակումներից<sup>2</sup>՝ նախատեսելով յուրաքանչյուր հիմնական իրավունքի սահմանափակման առանձին հիմքեր, ինչը թույլ է տալիս հաշվի առնել յուրաքանչյուր հիմնական իրավունքի սահմանափակման առանձնահատկությունները<sup>3</sup>:

Հիմնական իրավունքների սահմանափակումների հիմնախնդիրը սերտորեն կապված է նաև այդ *սահմանափակումներին ներկայացվող պահանջների* հետ: 2005թ. Խմբագրությամբ Սահմանադրությունն ուղղակի պահանջ չէր ներկայացնում այն օրենքներին, որոնք սահմանափակում են հիմնական իրավունքները: Քանի որ հիմնական իրավունքների սահմանափակումների համար հիմք հանդիսացող լեզիտիմ շահերը բազմազան են, և դրանք չեն կարող սպառիչ կերպով ամրագրվել, Սահմանադրությունը նախատեսել է սահմանափակումներին ներկայացվող ընդհանուր պահանջներ, որոնք լայն ճանաչում են գտել ժամանակակից սահմանադրական իրավունքում. խոսքը համաչափության, որոշակիության և իրավունքի էության անխախտելիության սկզբունքների (Սահմանադրության հոդվածներ 78-80) հստակ ամրագրման մասին է<sup>4</sup>:

Հիմնական իրավունքների համար գործնականում լրացուցիչ կարևոր երաշխիք է այն, որ 2015 թ. Խմբագրությամբ Սահմանադրություն 81-րդ հոդվածը մարդու իրավունքներին վերաբերող սահմանադրական նորմերը մեկնաբանելիս որպես ուղենիշ է սահմանել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ *միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան*, ինչը նշանակում է, որ իրավակիրառն այս հարցում պետք է հաշվի առնի, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան, այդ թվում՝ այլ պետությունների գործերով:

2015 թ. սահմանադրական փոփոխություններով առաջին անգամ առանձնահատուկ մանրամասնությամբ են սահմանվում *արդարադատական իրավունքները* (61-73-րդ հոդվածներ): Այս առումով հատկապես կարևոր են արդյունավետ դատա-

<sup>1</sup> Սոցիալական իրավունքների սահմանադրական ամրագրման մասին առավել մանրամասն տե՛ս Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 39-42:

<sup>2</sup> 2005 թ. Խմբագրությամբ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>3</sup> Տե՛ս Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 44-45:

<sup>4</sup> Համաչափության և իրավունքի էության անխախտելիության սկզբունքները ուղղակիորեն նախատեսված են Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 52-րդ հոդվածի 1-ին մասում:

կան պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները (61-րդ և 63-րդ հոդվածներ): Սահմանադրական նորմերը կանխորոշում են դատավարական օրենսգրքերում նախատեսվող հետագա մեխանիզմների բովանդակությունը:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն առաջին անգամ ամրագրում է նաև մի շարք այլ կարևոր հիմնական իրավունքներ, ինչպիսիք են՝

- մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը (հոդված 25),
- մարմնական պատիժների արգելքը (հոդված 26),
- կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը (հոդված 30),
- պատվի և բարի համբավի անձեռնմխելիությունը (հոդված 31),
- անձնական տվյալների պաշտպանությունը (հոդված 34),
- երեխայի իրավունքները (հոդված 37),
- այլընտրանքային ծառայության իրավունքը (հոդված 41, մաս 3),
- պատշաճ վարչարարության իրավունքը (հոդված 50),
- տեղեկություններ ստանալու իրավունքը (հոդված 51),
- քաղաքական ապաստանի իրավունքը (հոդված 54),
- արտաքսման արգելքը (հոդված 55, մաս 1),
- պետության կողմից պատճառված վնասի հատուցման իրավունքը (հոդված 62),
- մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը (հոդված 67, հատկապես՝ կետ 3-5),
- ներման խնդրանքի իրավունքը (հոդված 70),
- մեղքի սկզբունքը և պատժի նշանակման ժամանակ համաչափության սկզբունքը (հոդված 71):

Միջազգային իրավական չափանիշներին առավել համահունչ են դարձել նաև **Մարդու իրավունքների պաշտպանի** գործունեության սահմանադրական հիմքերը: Այս առումով կարևոր նորույթ է այն, որ սահմանադրական նորմերը Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները տարածում են նաև մասնավոր հատվածի վրա: Սահմանադրության 191-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պաշտպանը հետևում է ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, այլև Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը: Խոսքը վերաբերում է բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություններին, որոնց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանությունը այլևս դուրս չի մնա պաշտպանի իրավասությունից: Սահմանադրության 191-րդ հոդվածի 3-րդ մասը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց վրա հստակ պարտականություն է դրել Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ ու պարզաբանումներ և աջակցել նրա աշխատանքներին: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի արդյունավետ գործունեության սահմանադրական կարևոր երաշխիք է նաև 193-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը, ըստ որի՝ «պետությունն ապահովում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը»:

## V. Հիմնական իրավունքների կենսագործման մեխանիզմները

Հիմնական իրավունքների ժամանակակից ցանկի սահմանադրական ամրագրումը հիմնական իրավունքների կենսագործման անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախապայման է: Որպեսզի հիմնական իրավունքները կյանքի կոչվեն, անհրաժեշտ են նաև լավ կշռադատված մեխանիզմներ:

Սահմանադրական նորմերը և, հատկապես, հիմնական իրավունքների նորմերը, որպես կանոն՝ վերացականության բարձր աստիճան ունեն, ուստի դրանց գործնական կենսագործումը մեծապես կախված է օրենքների միջոցով հետագա մանրամասնումից: Այլ կերպ ասած, մի կողմից՝ հիմնական իրավունքներն օրենքների կարիքն ունեն, որպեսզի կյանքի կոչվեն, բայց մյուս կողմից՝ հենց այստեղ էլ առաջ է գալիս այն ռիսկը, որ հիմնական իրավունքը կարող է հետին պլան մղվել, և առաջնային դառնալ օրենքի կարգավորումը: Օրենսդրական կարգավորումը կարող է էապես փոխել հիմնական իրավունքի բովանդակությունն ու դրանով վերապահվող երաշխիքները: Արդյունքում հիմնական իրավունքները և օրենքները գտնվում են բարդ փոխհարաբերակցության մեջ, որի պարագայում հիմնական իրավունքների կենսագործումը մի կողմից՝ կախված է օրենսդրական կարգավորումից, մյուս կողմից՝ այդ օրենսդրական կարգավորումները պետք է համապատասխանեն սահմանադրությամբ սահմանված չափացույցին՝ հիմնական իրավունքի բովանդակությամբ:

Հիմնական իրավունքների պաշտպանության մեխանիզմների տեսանկյունից 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը զարգացրել է 2005 թ. սահմանադրական փոփոխություններով ներմուծված մեխանիզմները:

Օրենսդրի կաշկանդվածությունը հիմնական իրավունքների միջոցով ապահովում է Սահմանադրական դատարանը՝ սահմանադրական վերահսկողության տարբեր մեխանիզմների միջոցով: Նորմատիվ իրավական ակտերը հակասահմանադրական ճանաչելու մենաշնորհը վերապահված է միայն **Սահմանադրական դատարանին**, ինչը բնորոշ է կենտրոնացված սահմանադրական վերահսկողության մոդել ունեցող բոլոր երկրներին: Դա նշանակում է, որ իրավակիրառ գործընթացում հակասահմանադրականության հարցի բախվելիս իրավասու իրավակիրառ մարմինները պարտավոր են հարցը դարձնել սահմանադրական վերահսկողության առարկա:

Հիմնական իրավունքների համապատասխանությունը Սահմանադրությանը բնականաբար կարող է ստուգվել *նորմերի վերացական վերահսկողության* միջոցով՝ Ազգային ժողովի պատգամավորների 1/5-րդի, Կառավարության, Հանրապետության նախագահի, Սարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա (2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 168 հոդվածի 1-ին մաս, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 4-րդ, 5-րդ և 10-րդ կետեր): Այս առումով, գործնականում կարևոր դերակատարում կարող է ունենալ Հանրապետության նախագահը, ով չունի քաղաքական գործառույթներ, պարտավոր է լինել քաղաքականապես չեզոք և Սահմանադրությամբ օժտված է մեկ կարևորագույն առաքելությամբ՝ հետևել Սահմանադրության պահպանմանը (հոդված 123, մաս 2)՝ անհրաժեշտության դեպքում դիմելով Սահմանադրական դատարան:

Սահմանադրական վերահսկողության վերացական մեխանիզմի կողքին գործնականում առավել կարևոր նշանակություն ունի նորմերի *կոնկրետ վերահսկողությունը*, որի շրջանակը 2015 թթ. սահմանադրական փոփոխություններով զգալիորեն ընդլայնվեց: Սահմանադրությունը ներկայումս դատարաններին և դատախազին լիարժեք հնարավորություններ է վերապահում Սահմանադրական դատարանի քննության առարկա դարձնելու այն բոլոր ակտերը, որոնք իրենց կարծիքով խախտում են մարդու հիմնական իրավունքները (169-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ և 4-րդ մաս): Այս առումով առանցքային է դատարանների կողմից Սահմանադրական դատարան դիմելու իրավասության հստակեցումը, քանի որ առաջին հերթին դատարաններն են իրենց ամենօրյա գործունեության ընթացքում առնչվում մարդու իրավունքների կոնկրետ խախտումներին և հետևաբար՝ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումը պարտավոր են ստուգել, թե արդյոք կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտը համապատասխանում է Սահմանադրությանը: Համապատասխանաբար, 2015 թ. փոփոխություններով Սահմանադրու-

թյան 169-րդ հոդվածի 4-րդ մասը որպես դատարանների պարտականություն է սահմանում իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան դիմելը<sup>1</sup>, եթե ողջամիտ կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և կարծում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ օրենքի կիրառման միջոցով:

Հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևոր նշանակություն ունի Սահմանադրական դատարան ներկայացվող **անհատական գանգաղը**, քանի որ հենց անհատն է առաջին հերթին շահագրգռված իր հիմնական իրավունքը ենթադրաբար խախտող նորմի սահմանադրականության ստուգմամբ: 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը պահպանել է դեռևս 2005 թ. փոփոխություններով նախատեսված սահմանափակ անհատական գանգաղի ինստիտուտը, ըստ որի՝ սահմանադրական գանգաղի առարկա կարող է հանդիսանալ միայն նորմատիվ իրավական ակտը կամ դրա որևէ դրույթը (հոդված 169, մաս 1, կետ 8), բայց ոչ դատարանի վճիռը: Սակայն, 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունը ընդլայնել է անհատական գանգաղի շրջանակներում Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը՝ նախատեսելով այն ոչ միայն օրենքի սահմանադրականության ստուգման, այլև ցանկացած նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով, եթե դրանով խախտվել են մարդու հիմնական իրավունքները և ազատությունները (հոդված 169, մաս 1, կետ 8): Անհատական գանգաղի հարցում սահմանադիրն առաջնորդվել է նրանով, որ Սահմանադրական դատարանի հիմնական գործառույթը **ընդհանուր-վերացական ակտերի համապատասխանեցումն է Սահմանադրությանը**, իսկ կոնկրետ-անհատական ակտերի պարագայում՝ սխալների ուղղման առաքելությունը դրված է ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների վրա: Այլ կերպ ասած՝ Սահմանադրությունը նպատակ չի ունեցել ի դեմս Սահմանադրական դատարանի՝ ստեղծելու դատական ակտերը վերանայող մի նոր՝ 4-րդ ատյան:

Բացի վերոհիշյալից, սահմանադրական մակարդակ է բարձրացվել նաև այն դրույթը, ըստ որի՝ այդ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը հաշվի է առնում նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը (հոդված 169, մաս 1, կետ 8): Այս լրացման նպատակն այն է, որ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը հաշվի առնի նաև այն, թե ինչպես է նորմը մեկնաբանվել կոնկրետ գործով:

Քանի որ բազմաթիվ հիմնական իրավունքների իրականացումը կախված է համապատասխան կազմակերպական կառուցակարգերից և ընթացակարգերից, 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 75-րդ հոդվածը պարտադրում է օրենսդիրն հիմնական իրավունքները կարգավորելիս սահմանել **արդյունավետ ընթացակարգեր և կառուցակարգեր**:

Հիմնական իրավունքներն ազդում են իրավակիրառ մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտերի **մեկնաբանման և կիրառման** վրա: Հիմնական իրա-

<sup>1</sup> 2005 թ. Խմբագրությամբ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված էր, որ դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով «կարող են» դիմել Սահմանադրական դատարան: Սահմանադրական այս նորմը, իրացվելով դատավարական օրենսդրության մեջ, սահմանվել էր որպես սահմանադրական դատարանի հարցում դատարանի իրավունք (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 106-րդ հոդվածի 2-րդ մաս, Վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ):

վունքների պահանջները պետք է ուղենիշ լինեն հատկապես վարչական մարմինների կողմից իրենց հայեցողական լիազորությունների իրականացման ժամանակ:

Հիմնական իրավունքների կենսագործման իրավական մեխանիզմների կողքին ոչ պակաս կարևոր է նաև հիմնական իրավունքների վրա հիմնված համապատասխան **իրավական մտածողության ձևավորումը**: Հիմնական իրավունքներն իրավական կշիռ կարող են ձեռք բերել միայն այն պարագայում, երբ ցանկացած իրավակիրառ կոնկրետ իրավական հարց լուծելիս որպես ելակետ ընդունի Սահմանադրությունը և դրանում ամրագրված հիմնական իրավունքները: Նման մտածողություն ձևավորելու ճանապարհին առանցքային դերակատարում ունեն ոչ միայն դատարանները և վարչական մարմինները, այլև իրավունքի գիտությունն ու իրավաբանական կրթությունը: Իրավական մտածողության կողմնորոշումը դեպի հիմնական իրավունքները հրատապ է դարձնում հիմնական իրավունքների դոգմատիկայի զարգացումը, որը պետք է գիտական մեթոդներով պատասխան տա այն հարցին, թե ինչ է պահանջում, արգելում կամ թույլատրում գործող իրավունքը: Հիմնական իրավունքների դոգմատիկան կարող է կապող օղակ լինել գիտության ու պրակտիկայի միջև և դրանով նպաստել հիմնական իրավունքների ճիշտ մեկնաբանմանը և կիրառմանը: Տեսության ու պրակտիկայի նման համակցումը կնպաստի, որ հիմնական իրավունքների կիրառումը դառնա իրավական առօրյա:

*Հավելված*

**Սահմանադրական դատարան ներկայացված անհատական գանգատների և նորմերի կոնկրետ վերահսկողության դիմումների 2006-2018 թթ.վիճակագրությունը<sup>1</sup>**

Վարույթի տեսակ/ Դիմող սուբյեկտ	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Անհատական գանգատ <sup>2</sup>	234	98	194	295	299	302	313	244	157	155	197	165	155 <sup>3</sup>
Ֆիզիկական անձինք	221	89	185	283	285	287	293	223	148	146	177	146	
իրավաբանական անձինք	13	9	9	12	14	15	20	21	9	9	20	19	
Նորմերի կոնկրետ վերահսկողություն	2	0	1	2	9	1	0	6	2	7	9	6	15
դատարաններ	1	0	1	2	7	1	0	6	2	4	7	4	15
գլխավոր դատախազ	1	0	0	0	2	0	0	0	0	3	2	2	0

<sup>1</sup> Վիճակագրությունը մշակվել է Սահմանադրական դատարանի ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ 2007-2019 թթ. տարեկան հաղորդումների հիման վրա (մատչելի է <http://www.concourt.am/armenian/report/index.htm> հղումով, այցելվել է 02.12.2019 թ.):

<sup>2</sup> Անհատական դիմումների միջին հաշվով մոտ 76,8 տոկոսը Սահմանադրական դատարանի կողմից վարույթ չի ընդունվել՝ «Սահմանադրական դատարանի մասին օրենքով դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջներին չհամապատասխանելու, կամ ակնհայտ անհիմն ճանաչվելու, կամ վիճարկվող նորմը դատարանի կողմից դիմողի նկատմամբ կիրառված չլինելու հիմքով»:

<sup>3</sup> Ֆիզիկական և իրավաբանական անձանց մասով տարբերակված տվյալները մատչելի չեն:

## ЭВОЛЮЦИЯ КОНСТИТУЦИОННОГО УРЕГУЛИРОВАНИЯ ОСНОВНЫХ ПРАВ В АРМЕНИИ

**Вардан Погосян**

*Заместитель члена Европейской комиссии за демократию через право (Венецианская комиссия), член Специальной комиссии по конституционным реформам 2013–2015 гг.*

---

**Нора Саргсян**

*Доцент кафедры европейского и международного права ЕГУ,  
кандидат юридических наук*

---

Основные права, как позитивные конституционные права, не имеют долгой истории в Армении, и впервые они нашли свое конституционное закрепление лишь в Советской Армении. Однако в советском государстве, где индивид подчинялся «интересам общества», основные права, независимо от того, как они были провозглашены в Конституции, не могли и не имели характера, типичного для современных правовых государств. Об основных правах и их реальной роли можно говорить только после обретения независимости Армении, но для полного преодоления советских подходов к регулированию основных прав потребовались две крупномасштабные конституционные реформы. Однако реализация основных прав и их практическая значимость во многом зависит от правильного восприятия основных прав государственными органами (прежде всего судами и административными органами) как адресатами основных прав.

## THE EVOLUTION OF THE CONSTITUTIONAL REGULATION OF FUNDAMENTAL RIGHTS IN ARMENIA

**Vardan Poghosyan**

*Deputy Member of the European Commission for Democracy Through Law (Venice Commission), Member of the Specialized Commission for Constitutional Amendments*

---

**Nora Sargsyan**

*PhD., Associate Professor at the YSU Chair of European and International Law*

---

Fundamental rights, as positive constitutional rights, do not have a long history in Armenia, and for the first time they found their constitutional regulation only in Soviet Armenia. However, in the Soviet state, where the individual was subordinate to the “interests of the society”, fundamental rights, regardless of how they were proclaimed in the Constitution, could not and did not have a character typical to modern legal states. In the modern Republic of Armenia, fundamental rights and their real role can be discussed only after independence, but two major constitutional changes were required to completely overcome the Soviet approaches to regulating fundamental rights. However, the implementation of fundamental rights and their practical significance largely depends on the correct perception of fundamental rights by state bodies (primarily courts and administrative bodies) as the addressees of fundamental rights.

**Բանալի բառեր** – Սահմանադրություն, հիմնական իրավունքներ, էվոլյուցիա, սահմանադրական փոփոխություններ, իրավական պետություն, սոցիալական իրավունքներ, սուբյեկտիվ իրավունքներ, Սահմանադրական դատարան, դատական իշխանության անկախություն, արդարադատության խորհուրդ, Բարձրագույն դատական խորհուրդ, անմիջականորեն գործող իրավունք, Եվրոպական կոնվենցիա, արժանապատվություն, գործելու ընդհանուր ազատություն, անհատական զանգատ, նորմերի կոնկրետ վերահսկողություն, նորմերի վերացական վերահսկողություն, սահմանադրական արդարադատություն, Մարդու իրավունքների պաշտպան, հիմնական իրավունքների սահմանափակումներ, հիմնական իրավունքների դոգմատիկա

**Ключевые слова** – Конституция, основные права, эволюция, конституционные поправки, верховенство закона, социальные права, субъективные права, Конституционный суд, независимость судебной власти, Совет правосудия, Высший судебный совет, непосредственно действующее право, Европейская конвенция, достоинство, общая свобода действий, индивидуальная жалоба, конкретный и абстрактный нормоконтроль, конституционное правосудие, Защитник прав человека, ограничения основных прав, догматика основных прав.

**Key words:** Constitution, fundamental rights, evolution, constitutional amendments, rule of law, social rights, subjective rights, Constitutional court, independence of the judiciary, council of justice, Supreme Judicial Council, a law with direct effect, European Convention, dignity, right to general freedom of action, individual complaint, specific and abstract normcontrol, constitutional justice, Defender of human rights, restrictions of fundamental rights, dogmatics of fundamental rights.